ներքեւն է, բայց երբ փոքր ինչ հողը քանդելով և փոսացնելով ճրագ կամ լուցկի (սպիչկայ) են կպցնում այն հողին, իսկոյն վառւում է այն հողը և կարմիր բոցը բարձրանում և այն բոցը որքան կամենան, կարող են վառ պահել և իբրեւ կրակ գործադրել զանազան պիտոյից համար, զոր օրինակ՝ գործարանի, վառարանի, խոհանոցի, և այլն. իսկ երբ կամենան շիջեցնել կրակը և բոցը, մի փոքր հասարակ հող լցնեն կամ ցանեն բոցի վրայ, իսկոյն կը շիջանի և բոցը կանհետանայ։ Այսպէս տեսինք և փորձեցինք 1888 թուին, երբ գնացել էինք յատկապէս նաւթահանքերը և հրաբուխները տեսնելու։ Բաղուի նաւթահանքերի նաւթային արտադրութեան մասին «Նոր Դար» օրաթերթը 1892 թ. մայիսի 27 № 89 այսպէս գրէ՝

Վիճակագրական տեղեկութիւններ, նաւթային արդիւնաբերութեան եւ արտահանութեան մասին։ (Վերջ։)

«Գալով նաւթի առատութեանը պիտի ասել, որ վերջի տարիներս արտադրութիւնը ոչ թէ միլիոն պուդերով է աւելանում նախորդ տարիներից, այլ տասնեակ միլիոններով է աւելանում։ Այսպէս 1889 թուին արտադրութիւնը կամ արտաբղխումը եղել է 205,554,400 պ. նաւթ, 1890 թ. 239,250,500 պ. իսկ 1891 թ. 288,765,620 պ. վերջին քանակութեանց մեքենայով դուրս է հանուած 235,386,928 պ. արտավիժած է 39,181,550 պ. պահեստի մէջ է ժողովուած 274,243,228 պ. պահեստում ընդունելիս այրուած, փչացած կամ թէ արտավիժման ժամանակ պատրաստի պահեստներ չ՝լինելուց ցրուած և կորած է 14,523,000 պ. միջին հաշուով այդ թիւը համեմատելով արտադրութեան հետ 19 % է կազմում։ Պահեստի ժողովուած նաւթը անցեալ տարուանից աւելացել է 48,301,793 պ. մեքենայով դուրս հանուածը աւել է անցեալ տարուանից — 58,814,993 պ. արտավիժածը պակաս է անցեալ տարուանից, 10,720,450 պ. Բալախանի արդիւնաբաններից 17 նաւթանցք խողովակներով արտամղուած է Սեւ. քաղաքի գործարանները 266,812,794 պ. ներկայ տարուայ յունվարին արդիւնաւորների պահեստներում մնացած է 8,431,324 պ։